

«ԴՈՐՈՇՆԻԿ» ՍՊԸ

ՎՆԱՍԱԿԱՐ ՆՅՈՒԹԵՐԻ ՍԱՀՄԱՆԱՅԻՆ ԹՈՒՅԼԱՏՐԵԼԻ
ԱՐՏԱՆԵՏՈՒՄՆԵՐԻ (ՍԹԱ) ՆՈՐՄԱՏԻՎՆԵՐԻ
ՆԱԽԱԳԻԾ



ՍՊԸ

Ա.ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Կատարողների ցանկ՝
Գլ.մասնագետ – Ռ.Բարեղամյան
“Ռադուգա” հաշվարկի կատարող՝ Է.Մելիքյան

ԱՆՆՈՏԱՑԻԱ

Ուսումնասիրության օբյեկտ են հանդիսանում «ԴՈՐՈԺՆԻԿ» ՍՊԸ գործունեության ընթացքում առաջացած արտանետումները:

- «ԴՈՐՈԺՆԻԿ» ՍՊԸ փաստացի արտանետումների ցուցանիշների հիման վրա հաշվարկվել է օդի պահանջվող օգտագործումը (ՕՊՕ) (հավելված-1), որի արդյունքում պարզվել է, որ`

- **Ա/Հ-N-1** արտանետումները մեկ տարում գերազանցում են երկու միլիարդ մ³ չափանիշը (339.22մլրդմ³/տարի), ուստի արտանետման չափաքանակները կարող են սահմանվել ՍԹԱ նախագծի հիման վրա:

- **Ա/Հ-N-2** արտանետումները մեկ տարում գերազանցում են երկու միլիարդ մ³ չափանիշը (80.0մլրդմ³/տարի), ուստի արտանետման չափաքանակները կարող են սահմանվել ՍԹԱ նախագծի հիման վրա:

ՍԹԱ-ն գիտա-տեխնիկական նորմատիվ է, որն հաստատվում է յուրաքանչյուր աղբյուրի և արտանետվող յուրաքանչյուր նյութի համար, ձեռնարկությունների արտադրական գործունեության վնասակար ազդեցությունը սահմանափակելու նպատակով:

Աշխատանքի նպատակն է մշակել մթնոլորտն աղտոտող վնասակար նյութերի սահմանային թույլատրելի արտանետումների (ՍԹԱ) նորմատիվների նախագիծը:

ՍԹԱ նորմավորման աշխատանքների իրականացման համար հիմք են հանդիսացել ՀՀ կառավարության 27.12.2012թ. “Մթնոլորտային օդն աղտոտող նյութերի սահմանային թույլատրելի արտանետումների նորմատիվների մշակման ու հաստատման կարգը սահմանելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի մարտի 30-ի N 192 և 2008 թվականի օգոստոսի 21-ի N 953-Ն որոշումներն ուժը կորցրած ձանաչելու մասին” թիվ 1673-Ն որոշումը:

Աշխատանքում ի մի են բերվել ձեռնարկության գործունեությունից առաջացող մթնոլորտն աղտոտող աղբյուրների արտանետումների որակական և քանակական բնութագրերը:

Ներկա աշխատանքում բերված են աղտոտման աղբյուրների տեխնիկական հետազոտման արդյունքների տվյալները` տեքստային և աղյուսակային տեսքով: Կատարված է մթնոլորտն աղտոտող նյութերի ցրման հաշվարկը:

Ձեռնարկությունն ունի երկու արտադրական հրապարակներ, Ա/Հ – N 1, 2

- Ա/Հ- N1 որը ունի մթնոլորտն աղտոտող 5 աղբյուրներ, որոնցից արտանետվում են 4 վնասակար նյութեր:

Արտանետումների ընդհանուր քանակը կազմում է **39.970 տ/տարի**, այդ թվում՝

Փոշի անօրգանական(SiO_2 20 -70%)	- 26.0տ./տարի
Ածխածնի օքսիդ	- 8.920տ./տարի
Ազոտի օքսիդներ (երկօքսիդի հաշվարկով)	- 3.050տ./տարի
Ածխաջրածիններ	- 2.0տ./տարի

- Ա/Հ - 2 որը ունի մթնոլորտն աղտոտող 1 աղբյուր որոնցից արտանետվում են 1 վնասակար նյութ:

Արտանետումների ընդհանուր քանակը կազմում է **8 տ/տարի**, այդ թվում՝

Փոշի անօրգանական (SiO_2 –20-70%)	- 8.0 տ/տարի
--	--------------

- Ա/Հ- N 1 արտանետումների հետևանքով շրջակա միջավայրին հասցվելիք վնասի մեծությունը կազմում է - **3749340** դրամ, հաշվարկը տես հավելված 2-ում:

- Ա/Հ- N 2 արտանետումների հետևանքով շրջակա միջավայրին հասցվելիք վնասի մեծությունը կազմում է - **960000** դրամ, հաշվարկը տես հավելված 2-ում:

ՍԹԱ նորմատիվներին հասնելու ժամկետը համարվում է հաստատման պահից:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Անոտացիա

1. Ընդհանուր տեղեկություններ կազմակերպության մասին	- 6
2. Տնտեսվարող սուբյեկտի բնութագիրը որպես մթնոլորտային օդն աղտոտող աղբյուր	- 7
3. Մթնոլորտ արտանետվող աղտոտող նյութերի անվանացանկը	- 10
4. Զարկային արտանետումներ ունեցող աղբյուրների թվարկումը եվ բնութագիրը	- 11
5. ՍԹԱ նորմատիվների հաշվարկի համար աղտոտող նյութերի պարամետրերը	- 12
6. ՍԹԱ նորմատիվների /չափաքանակների հաշվարկի համար անհրաժեշտ ելակետային տվյալները	- 19
7. Վնասակար նյութերի արտանետումների ցրման հաշվարկը	- 20
8. Վնասակար նյութերի ցրման հաշվարկի հակիրճ արդյունքները	- 21
9. Մթնոլորտ ամենամեծ աղտոտումներ առաջացնող աղբյուրների ցուցակը	- 22
10. ՍԹԱ նորմատիվներ հասնելու միջոցառումների ծրագիր	- 23
11. Անշարժ աղբյուրներից աղտոտող նյութեր մթնոլորտ արտանետելու նորմատիվներ/չափաքանակներ	- 25
12. Անբարենպաստ կլիմայական պայմանների ժամանակ արտանետումների կարգավորման միջոցառումներ	- 26
13. Արտանետումների վերահսկման և ՍԹԱ կատարման նպատակով նախատեսվող և իրականացվող միջոցառումներ	- 27
14. Օգտագործված գրականություն Հավելվածներ`	- 37
- ՕՊՕ-ի Հաշվարկը ըստ տվյալ ձեռնարկության-հավելված-1	- 28
- Վնասի հատուցման հաշվարկը -հավելված-2 Ձեռնարկության պլան-սխեման Ռելիեֆի գործակիցը Կլիմայական տվյալներ Ֆոնային աղտոտվածության տվյալներ Մեքենայական հաշվարկներ	- 29

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«ԴՈՐՈՄՆԻԿ» ՍՊԸ հիմնականում զբաղվում է շինարարական աշխատանքներով: Շինարարական աշխատանքներն իրականացնելու համար, իր ենթակայության տակ ունի ասֆալտ-բետոնի, բետոնի և խճի մանրեցման արտադրամասեր ինչպես նաև շահագործում է անդեզիտաբազալտի հանքավայրը:

Արտադրական բոլոր գործողությունները կատարվում են երկու տարբեր տարածքներում՝ արտադրական հրապարակներ N 1, 2:

Արտադրական հրապարակ N 1 – հիմնականում կատարվում է ասֆալտ-բետոնի, բետոնի և խճի մանրեցման աշխատանքներ, որը գտնվում է Երևան քաղաքի հարավ-արևմտյան մասի, Աջափնյակ համայնքում, Հաղթանակ գյուղից 2.0-2.5կմ. դեպի հյուսիս արևմուտք, Սպանդարյանի արտադրական հանգույցում, հեռու բնակելի տարածքից:

Գործունեության հասցեն՝ ք.Երևան, Աջափնյակ համայնք, Հաղթանակի խճուղի 7

Արտադրական հրապարակ N 2 – շահագործում է Հայկաձորի է անդեզիտաբազալտի հանքավայրը, որը գտնվում է ՀՀ Շիրակի մարզի Անիի տարածաշրջանում, տեղակայված է Հայկաձոր գյուղից մոտ 3կմ դեպի հարավ-արևելք: Մոտակա բնակավայրերն են Հայկաձոր, Խարկով գյուղերը:

Ունի շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության եզրակացություն՝ ԲՓ-133, տրված 28.12.2011թ.

Գործունեության հասցեն՝ ՀՀ Շիրակի մարզ, Հայկաձորի համայնք

«ԴՈՐՈՄՆԻԿ» ՍՊԸ պետ.ռեգիստրի գրանցման համարը՝ 444.110.20024, տրված 14.06.2002թ.

Իրավաբանական հասցեն է՝

ԼՂՀ Ասկերանի շրջան, գյուղ Այգեստան

**2. ՏՆՏԵՍՎԱՐՈՂ ՍՈՒՔՅԵԿՏԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ ՈՐՊԵՍ ՄԹՆՈՒՈՐՏԱՅԻՆ ՕՐՆ
ԱՐՏՈՏՈՂ ԱՐՔՈՒՐ**

«ԴՈՐՈՃՆԻԿ» ՍՊԸ աշխատանքային գործընթացում մթնոլորտ արտանետվող վնասակար նյութերի հիմնական աղբյուր են հանդիսանում՝

- ԱՀ- N 1- - *ասֆալտ-բետոնի հանգույցը*
- *բիտումի պահպանում, տաքացումը*
- *խճի ջարդման և մանրեցման հանգույցները N 1, 2*
- *բետոնի պատրաստման հանգույցը*

ԱՀ- N 2 - Հայկաձորի անդեզիտաբազալտի հանքավայրը

Արտադրության բնութագիրը

Արտադրական հրապարակ N 1

- *Ասֆալտ-բետոնի հանգույցում* տեղադրված է ասֆալտ-բետոնի պատրաստման մեկ հոսքագիծ՝ ԴՍ-558 տիպի, 400 տոն/օր արտադրողականությամբ: Ասֆալտ - բետոնի հանգույցում պրոցեսները ընթանում են հետևյալ փուլերով՝ Իներտ նյութերի (ավազ, խիճ) բեռնաթափում, խառնում դասակույտերով և նրանց բնական չորացում, որոնք հանդիսանում են փոշու արտանետման աղբյուրներից մեկը:

Կոնվեյերի միջոցով չափավորվող բունկերներից իներտ նյութերը փոխադրվում են չորացնող թմբուկ, որտեղ նրանք տաքացվում են 130-140⁰С:

- Տաքացված իներտ նյութերի տեսակավորումն կատարվում է ըստ մասագատիչների շերտիավոր էլեվատորի և վիբրացիոն քարմաղի օգնությամբ:

- Բիտումի տաքացումը և ջրագրկումը կատարվում է մինչև 130-140⁰С տաքացվող բաքերում: Հալած բիտումը տրվում է խողովակաշարով ասֆալտ-բետոնի կայանքի դոզատոր, տեղի է ունենում բոլոր կոմպոնենտների խառնում: Բիտումի ընդունումը և պահպանումը կատարվում է առանձին բաքերում:

Պատրաստի ասֆալտ-բետոնը լցվում է կուտակման բունկեր կամ ավտոինքնաթափեր:

Ասֆալտ-բետոնի հանգույցը հագեցված է երկաստիճան մաքրման փոշեռսիչներով /ցիկլոններ/,– ՑՆ-15 չորս տիպի ցիկլոնների խումբ:

Փոշին մտնում է փոշեռսիչ ցիկլոններ և լրացուցիչ մաքրվելուց հետո արտանետվում է մթնոլորտ:

Ասֆալտ - բետոնի հանգույցի աշխատանքների ընթացքում հիմնականում օգտագործում է գազ - 900 000մ³/տարի, պահեստային վառելիք չի նախատեսված

Արտանետման հիմնական աղբյուր է հանդիսանում ասֆալտախառնիչ սարքերը: Իներտ նյութերի տաքացման համար գազի այրման ընթացքում չորացնող թմբուկում առաջանում են ծխագազեր՝ ածխածնի օքսիդ, ազոտի օքսիդներ, ածխաջրածիններ և փոշի անօրգանական: Նշված վնասակար նյութերը արտանետվում են N 1 աղբյուրից:

Բիտումի պահեստավորումից և պահպանումից արտանետվում են ածխաջրածիններ, իսկ բիտումի տաքացումը, ջրազրկումը կատարվում է գազայրիչի միջոցով, ծխախողովակ ունեցող բիտումի բաքում: Գազի ծախսը կազմում է - **50.000մ³/տարի**: Նշված գործընթացից արտանետվում է ածխածնի օքսիդ, ազոտի օքսիդներ, ածխաջրածիններ N 2 աղբյուրից:

Ընդհանուր գազի ծախսը կազմում է - 950000մ³/տարի (պահեստային վառելիք նախատեսված չի):

- ***Խճի ջարդման և մանրեցման հանգույցում N 1, 2*** տեղադրված են՝ խճի ընդունման բունկեր, կոտորակիչ, քարմաղ, որտեղ կատարվում է խճի ջարդում և մանրեցում՝ ըստ պահանջվող ֆրակցիաների և ժապավենային փոխադրիչներով տեղափոխվում են իներտ նյութերի կուտակման հրապարակ:

Իներտ նյութերի հրապարակում կատարվում է բեռնաթափում, իներտ նյութերի դարսումով խառնում, նրանց բնական չորացում:

Այս գործընթացներում առաջանում է փոշի, որի մի մասը մեքենաների շարժումով, քամու կողմից տարվելով, դառնում են մթնոլորտային արտանետում: Փոշու արտանետումները մեղմացնելու և նվազագույնին հասցնելու համար կատարվում են հրապարակների, լցակույտերի ջրցանման աշխատանքներ:

Նշված գործընթացներից արտանետվում է անօրգանական փոշի N 3, 4 աղբյուրներից:

- ***Բետոնի պատրաստման հանգույցում*** կատարվում են բետոնի շաղախի ստացման աշխատանքներ, օգտագործելով ցեմենտ, իներտ նյութեր, նշված բաղադրամասերը լցվում են դոզավորման բունկերներ, որից հետո տրվում են բետոնախառնիչ և լցվում է համապատասխան քանակի ջուր: Պատրաստի շաղախը օգտագործվում որպես արտադրական բետոն: Բետոնախառնիչի արտադրողականությունը 20մ³/ժամ բետոն:

Տեղադրված է նաև 0.7 մ³ արտադրողականությունությամբ բետոնախառնիչ:

Բետոնի պատրաստման գործընթացում արտանետման հիմնական աղբյուր են հանդիսանում՝ իներտ նյութերի և ցեմենտի բեռնաթափման, պահեստավորման գործընթացները: Ցեմենտի բունկերի վրա տեղադրված են փոշեռսիչներ՝ թևքային ֆիլտրեր: Նշված գործընթացներից արտանետվում է անօրգանական փոշի N 5 աղբյուրից:

Արտարդրական հրապարակ N 2

- Հայկաժողի անդեզիտարագալտի հանքավայրի շահագործումը

իրականացվում է բաց եղանակով, նախնական փխրեցումով, իսկ հորատապայթեցման աշխատանքները կատարվում են հորատանցքային լիցքերի կիրառումով, որից հետո հանքանյութը շերտփավոր էքսկավատորի միջոցով բարձվում է ավտոինքնաթափերի մեջ և տեղափոխվում է ՋՏ կայանք:

Հանքի շահագործման ժամանակ առաջացած թափոնները և մակաբացման ապարները հեռացվում են մեքենաներով դեպի ներքին լցակույտեր բաց հանքի եզրագծով, թափոնների կուտակման հրապարակ:

Քիչ քանակությամբ արտանետումներ առաջանում են մեխանիզմների և ավտոմեքենաների աշխատանքներից, մեքենաներն աշխատում են դիզելային վառելիքով, որոնց արտանետումները չկարգավորված արտանետման աղբյուրներ են, որոնք ունեն չնչին արտանետումներ, այդ պատճառով էլ հաշվարկներում չեն ընդգրկվել:

Այս գործընթացներում առաջանում է փոշի, որի մի մասը մեքենաների շարժումով, քամու կողմից տարվելով, դառնում են մթնոլորտային արտանետում:

Նշված աշխատանքների ընթացքում արտանետվում է անօրգանական փոշի N 1 աղբյուրից:

Փոշու արտանետումները մեղմացնելու և նվազագույնին հասցնելու համար կատարվում են ջրցանման աշխատանքներ:

- Տեխնոլոգիական սարքավորումների քանակը, արտանետման աղբյուրների պարամետրերը, վնասակար նյութերի արտանետումների քանակը և տեսակը բերված են աղյուսակ 3-ում:

Մոտակա տարիների ընթացքում ձեռնարկության տեխնոլոգիական ծավալների փոփոխություններ չեն սպասվում, ուստի աղյուսակ 3 հեռանկար սյունյակը չի լրացվում:

3. ՄԹՆՈՒՈՐՏ ԱՐՏԱՆԵՏԿՈՂ ԱՂՏՈՏՈՂ ՆՅՈՒԹԵՐԻ ԱՆՎԱՆԱՑԱՆԿԸ

Աղյուսակ 1

Նյութի անվանումը	Սթն միանգամյա առավելագույն, մգ/մ ³	Նյութի արտանետումները տ/տարի
Արտադրական հրապարակ N1		
Փոշի անօրգանական (SiO ₂ 20-70%)	0.3	26.0
Ածխածնի օքսիդ	5.0	8.920
Ազոտի օքսիդներ (երկօքսիդի հաշվարկով)	0.2	3.050
Ածխաջրածիններ	1.0	2.0
Արտադրական հրապարակ N2		
Փոշի անօրգանական (SiO ₂ –20-70%)	0.3	8.0

Գումարային հատկության նյութեր չկան:

**4. ԶԱՐԿԱՅԻՆ ԱՐՏԱՆԵՏՈՒՄՆԵՐ ՈՒՆԵՑՈՂ ԱՂՔՅՈՒՐՆԵՐԻ
ԹՎԱՐԿՈՒՄԸ ԵՎ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ**

ԱՂՅՈՒՍԱԿ 2.

Արտադրամասի (տեղամասի) և աղբյուրների անվանումները	Նյութի անվանումը	Նյութի զարկային արտանետումը գ/զարկ	Արտանետման պարբերական ությունը, (անգամ/ տարի)	Արտանետման տևողությունը, վրկ	Զարկային արտանետումնե րի տարեկան քանակությունը, տոն.
1	2	3	4	5	6

Տեխնոլոգիական գործընթացից զարկային արտանետումներ չեն առաջանում, այդ պատճառով աղյուսակ 2-ը չի լրացվել:

5. ՍՅԱ ՆՈՐՄԱՏԻՎՆԵՐԻ ՀԱՇՎԱՐԿԻ ՀԱՍԱՐ ԱՐՏՈՏՈՂ ՆՅՈՒԹԵՐԻ ՊԱՐԱՄԵՏՐԵՐԸ

Աղյուսակ 3

Արտա-դրություն, արտա-դրամաս	Աղտոտող նյութերի առաջացման աղբյուրները		Աշխատա-ժամը տարում		Արտանետման աղբյուրների անվանումը		Աղբյուրների քանակը		Աղբյուրի կարգա-թիվը		
	Անվանումը	Քանակը									
		ՆԿ	<	ՆԿ	<	ՆԿ	<	ՆԿ	<	ՆԿ	<
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
Արտադրական հրապարակ N 1											
Ասֆալտ բետոնի հանգույց ԴԱ-558	նախ.դոզավորման բունկերներ	4									
	չորացնող թմբուկ խառնարան ժապ. փոխադրիչ	1 1 4		2400		խողո-վակ		1		1	
	բիտումի պահպանման բաքեր բիտումի բաքեր գազայրիչով	5 3		2400		խողո-վակ		1		2	
Խճի ջարդման և մանրեցման հանգույց N1	բունկեր	1									
	կոտորակիչ ՍՄԴ-109 քարմաղ	1		2400		անկազմակերպ		1		3	
	ժապ. փոխադրիչ. իներտ նյութերի կուտակման հրապարակ	1 1 4									
		1									
Խճի ջարդման և մանրեցման հանգույց N2	բունկեր	1									
	կոտորակիչ ՍՄԴ-109 քարմաղ	1		2400		անկազմակերպ		1		4	
	ժապ. փոխադրիչ. իներտ նյութերի կուտակման հրապարակ.	1 1 4									
		1									
Բետոնի պատրաստման հանգույց	ցեմենտի բունկեր	1									
	դոզավորման բունկեր	3		2400		խողո-վակ		1		5	
	ժապ. փոխադրիչ բետոնախառնիչ խառնիչ 0.7մ ³	3 1 1									
		1									
Արտադրական հրապարակ N 2											
Անդեզիտա-բազալտի հանքավայր	հանք թափոնների կուտ. հրապարակ	1 1		2080		անկազմակերպ		1		1	

3-րդ աղյուսակի շարունակությունը

Աղբյուրի կարգաթիվը		Աղբյուրի բարձրությունը, մ		Տրամագիծը, մ		Գազաօդային խառնուրդի պարամետրերը արտանետման աղբյուրի ելքում					
						արագությունը մ/վրկ		ծավալը մ ³ /վրկ		ջերմաստիճանը	
ՆԿ	Հ	ՆԿ	Հ	ՆԿ	Հ	ՆԿ	Հ	ՆԿ	Հ	ՆԿ	Հ
11	12	13	14	15	16	17	18	19	20	21	22
<i>Արտադրական հրապարակ N 1</i>											
1		25		0.7		14.6		5.62		120	
2		5		0.3		15.3		1.08		100	
3		7		40		4.0		5026.55		20	
4		6		40		4.0		5026.55		20	
5		14		1.0		7.0		5.50		20	
<i>Արտադրական հրապարակ N 2</i>											
1		3		100		3.0		23562.0		20	

3-րդ աղյուսակի շարունակությունը

Աղբյուրի կարգաթիվը		Կոորդինատները քարտեզում, մ				Գագերը մաքրող սարքերի անվանումը		Մաքրվող նյութերը		Մաքրման միջին շահագործման աստիճանը		
		Կետային աղբյուրի, աղբյուրների խմբի կենտրոնի կամ գծային աղբ. 1-ին ծայրի		գծային աղբյուրի 2 -րդ ծայրի				Ապահովվածության գործակիցը %		Մաքրման առավելագույն չափը, %		
<i>ՆԿ</i>	<i>Հ</i>	<i>X1</i>	<i>Y1</i>	<i>X2</i>	<i>Y2</i>	<i>ՆԿ</i>	<i>Հ</i>	<i>ՆԿ</i>	<i>Հ</i>	<i>ՆԿ</i>	<i>Հ</i>	
<i>11</i>	<i>12</i>	<i>23</i>	<i>24</i>	<i>25</i>	<i>26</i>	<i>27</i>		<i>28</i>	<i>29</i>	<i>30</i>	<i>31</i>	<i>32</i>
<i>Արտադրական հրապարակ N 1</i>												
1		84	140	-	-	ցիկլոն ՑՆ-15 4ցիկլոնների խումբ		92		95		
2		64	160	-	-							
3		100	140	140	180	խոնավացում						
4		120	120	160	160	խոնավացում						
5		144	192									
<i>Արտադրական հրապարակ N 2</i>												
1		200	250	300	350							

Xo - 250

Yo-200

3-րդ աղյուսակի շարունակությունը

Աղբյուրի կարգաթիվը	Նյութի անվանումը	Աղտոտող նյութերի արտանետումները						ԱԹԱ հասնելու տարին
		ՆՎ			Հ (ՍԹԱ)			
		գ/վրկ	մգ/մ ³	տ/տ	գ/վրկ	մգ/մ ³	տ/տ	

Արտադրական հրապարակ N 1


1	փոշի անօրգանական ածխածնի օքսիդ	0,579	103.05	5,0	0,579	103.05	5,0	2015
	ազոտի օքսիդներ	0,978	174.06	8,450	0,978	174.06	8,450	
	ածխաջրածիններ	0,335	59.62	2,890	0,335	59.62	2,890	
	ածխաջրածիններ	0,174	30.97	1,500	0,174	30.97	1,500	
2	ածխածնի օքսիդ	0.055	50.86	0.470	0.055	50.86	0.470	2015
	ազոտի օքսիդներ	0.019	17.57	0.160	0.019	17.57	0.160	
	ածխաջրածիններ	0.058	53.63	0.500	0.058	53.63	0.500	
3	փոշի անօրգանական (SiO ₂ –20-70%)	1,100	0.22	9.500	1,100	0.22	9.500	2015
4	փոշի անօրգանական (SiO ₂ –20-70%)	1,100	0.22	9.500	1,100	0.22	9.500	2015
5	փոշի անօրգանական (SiO ₂ –20-70%)	0.231	42.02	2,0	0.231	42.02	2,0	2015

Արտադրական հրապարակ N 2

1	փոշի անօրգանական (SiO ₂ –20-70%)	1.068	0.05	8.0	1.068	0.05	8.0	2015
---	---	-------	------	-----	-------	------	-----	------

ՆՎ՝ ներկա վիճակ, Հ՝ հեռանկար


ՍՈՒՏԱ
 Կնասակար նուսեռի ատտանետման առեօրոնեռի
 «ԴՈՐՈՒՄՆԻԿ» ՍՊԸ
 Մ 1:2000
 Արտադրական իրապարակ N 1



Էլեմ. N	Շինարարական նշանակում
1	Առնձեռնարկի սենյակ
2	Պրակաբարձ
3	Ծեղ
4	Անբախտաբեր. սենյակ
4-1	Քանձուր
4-2	Անկապի պարսպալուս
4-3	Բիլյարդի ըստն
4-4	Բաղձ քարձն հանձրույթ N
4-5	Բարձր քարձն հանձրույթ N2
4-6	Բնանձի պտորարան հանձրույթ
4-7	Քանձաբարձ


Կատարող *Ս. Ս. Սարգսյան*
 (ստորագրություն)
Ֆ. Ֆ. Մանուկյան

Տեղակայման հարակարգի՝
 5:1:4000



← աշրանակի ուժ ու ռ →

Հահոճանի ԲոշաՓարկի



ԱՆՎԱՆԱՑԱՆԿ

- I ԲԱՑԱՀԱՆՔ
- II ՄՈՏՅՈՂ ՃԱՆԱՊԱՐԴ
- III ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՀՐԱՊԱՐԱԿ
 - 3.1 Բեռնարկղային տիպի տնակ
 - 3.2 Զրցուղարան
 - 3.3 Ձրի տարողություն
- IV ԱՐՏԱՔԻՆ ԼՑԱԿՈՒՅՑ

«Դորոժնիկ» ՍՊԸ		Հայկաձորի անդեզիտաբազալտների հանքավայր Լհ/Ձ - N2			
Ա.Ա.	ստորագր.	ԲԱՑԱՀԱՆՔ	Շիճրը	Փուլը	ԼԴ
«Դորոժնիկ» ՍՊԸ				Ա.Ն.	1:2000
Տնօրեն	Ա. Հովհաննիսյան		թերթ L - 4	թերթեր - 15	
Նախ. ղեկ.	Չ. Կարամանյան	Գլխավոր հատակագիծ	Լեռնային մաս		

**6. ՍԹԱ ՆՈՐՄԱՏԻՎՆԵՐԻ ԴՍՓԱՔԱՆԱԿԻ ՀԱՇՎԱՐԿԻ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ
ԵԼԱԿԵՏԱՅԻՆ ՏՎՅԱԼՆԵՐԸ**

Կատարվել է մթնոլորտն աղտոտող նյութերի աղբյուրների գույքագրում: Ըստ գույքագրման արդյունքի ՍԹԱ հաշվարկի ելակետային տվյալները կազմվել և հաշվարկվել են $\tilde{A}\tilde{I} \tilde{N}\tilde{O}$ 17.2.3.02-78- ին համապատասխան և բերված են 3 աղյուսակում: Հաշվարկները կատարվել են «Տարբեր արտադրությունների կողմից մթնոլորտն աղտոտող նյութերի արտանետումների հաշվարկի մեթոդիկան» ժողովածուի հիման վրա:

Նստեցման անչափելի գործակիցն ընդունվել է՝ գազանման վնասակար նյութերի և մանր դիսպերսության փոշու համար, որոնց նստեցման կարգավորված արագությունը չի գերազանցում 3-5 սմ/վրկ՝ 1, խոշոր դիսպերսության փոշու համար մաքրման բացակայության դեպքում՝ 3, մաքրման դեպքում՝ 2:

Ա/Հ-N1 Հաշվի առնելով, որ Երևան քաղաքի մթնոլորտում փոշու, ազոտի օքսիդների, ծծմբի անհիդրիդի, ածխածնի օքսիդի ֆոնային աղտոտվածության մակարդակը գերազանցում է թույլատրելի նորմերը (ՍԹԿ) Երևանում գործող կամ նախագծվող աղտոտման աղբյուրների համար ցրման համակարգչային հաշվարկը կատարվել է առանց ֆոնային աղտոտվածության տվյալների: Նշված նյութերի արտանետումների նորմավորումը կարգավորվում է ՀՀ բնապահպանության նախարարի 16.03.2005թ.

N 78-Ա հրամանով, ըստ որի ամբողջ քաղաքի տարածքում փոշին 0.08 ՍԹԿ (փոշու տվյալները ներկայացված է 0.5մգ/մ^3 ՍԹԿ ունեցող չտարբերակված փոշիների՝ այսինքն կախված մասնիկների համար), ծծմբի անհիդրիդի նորմը սահմանված է 0.5 ՍԹԿ, ածխածնի օքսիդինը՝ 0.1 ՍԹԿ:

Ազոտի օքսիդի համար տարբեր համայնքների տարածքների համար սահմանված են տարբեր նորմեր, Արաբկիր 0.03 ՍԹԿ, Կենտրոն՝ 0.07 ՍԹԿ, Շենգավիթ՝ 0.5 ՍԹԿ;

Ա/Հ-N2 - Ֆոնային աղտոտվածության տվյալները վերցվել են ՀՀ բնապահպանության նախարարության կայք էջից՝ ըստ բնակչության թվաքանակի կատարված հաշվարկի՝ կախված մասնիկներ - փոշի - 0.2մգ/մ^3 (փոշու ֆոնի տվյալները ներկայացված են 0.5մգ/մ^3 ՍԹԿ ունեցող չտարբերակված փոշիների՝ այսինքն կախված մասնիկների համար), ազոտի երկօքսիդ - 0.008մգ/մ^3 , ածխածնի օքսիդ - 0.4մգ/մ^3 ,

7. ԿՆԱՍԱԿԱՐ ՆՅՈՒԹԵՐԻ ԱՐՏԱՆԵՏՈՒՄՆԵՐԻ ՑՐՄԱՆ ՀԱՇՎԱՐԿԸ

Մթնոլորտում վնասակար նյութերի ցրվածության հաշվարկները կատարելու համար ճշգրտված և ուղղված տվյալների հիման վրա կազմվել են ՍԹԱ հաշվարկի ելակետային տվյալները:

Վնասակար նյութերով մթնոլորտի աղտոտվածության հաշվարկը կատարվել է «Ռադուգա» մեքենայական ծրագրով, որը առաջարկված է օգտագործման նախկին ԽՍՀՄ Հիդրոմետ Պետական Վարչության կողմից:

Գետնամերձ խտությունների բաշխման որոշումը կատարվել է 1000×1000 մ քառակուսում, 100մ քայլով:

ՕԴԵՐԵՎՈՒԹԱԲԱՆԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ ԵՎ ԳՈՐԾԱԿԻՑՆԵՐԸ ՈՐՈՆՔ ԲՆՈՐՈՇՈՒՄ ԵՆ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՐԱԾՔԻ ՄԹՆՈՒՈՐՏՈՒՄ ԿՆԱՍԱԿԱՐ ՆՅՈՒԹԵՐԻ ՑՐՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Ցրման պայմանները որոշող օդերևութաբանական բնութագրերը և գործակիցները ներկայացված են ստորև բերված աղյուսակում: Սահմանային թույլատրելի առավելագույն միանվագ կոնցենտրացիաները վերցված են ՀՀ կառավարության 2006թ. փետրվարի 2-ի N160-Ն որոշմամբ հաստատված ցանկից:

Աղյուսակ 4

ԲՆՈՒԹԱԳՐԵՐԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ԱՐԺԵՔԸ	
	N-1	N-2
Մթնոլորտի շերտադասավորությունից կախված գործակիցը, A	200	200
Տեղանքի ռելյեֆի գործակիցը	1.0	1.25
Տարվա ամենաշոգ ամսվա միջին ջերմաստիճանը T °C	25.8 ⁰ C	19.3 ⁰ C
Միջին տարեկան «քամիների վարդը» % -ով		
Հյուսիս	8	2
Հյուսիս-արևելք	17	5
Արևելք	8	14
Հարավ-արևելք	12	21
Հարավ	20	28
Հարավ-արևմուտք	19	11
Արևմուտք	11	8
Հյուսիս-արևմուտք	5	11
Քամու արագությունը, (բազմամյա տվյալների միջինը),որի գերազանցման կրկնությունը կազմում է 5% մ/վրկ	6մ/վրկ	7մ/վրկ

8. ՎՆԱՍԱԿԱՐ ՆՅՈՒԹԵՐԻ ՑՐՄԱՆ ՀԱՇՎԱՐԿԻ ՀԱԿԻՐՃ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Մթնոլորտում վնասակար նյութերի արտանետումների ցրման հաշվարկի արդյունքները ներկա վիճակի և հեռանկարի համար ցույց են տալիս, որ սահմանային թույլատրելի խտության գերազանցում չի դիտվում ոչ մի նյութի համար, այդ իսկ պատճառով վնասակար նյութերի համար սահմանված նորմատիվները առաջարկվում է ընդունել որպես ՍԹԱ :

Ձեռնարկության արտանետումները չեն գերազանցում այդ վնասակար նյութերի համար սահմանված չափանիշները, այդ պատճառով արտանետումների քանակն իջեցնող միջոցառումների պլան չի նախատեսվում:

Հաշվարկների վերլուծության հիման վրա առաջարկվում է բոլոր նյութերի համար նախատեսված արտանետումները ընդունել որպես սահմանային թույլատրելի. տես աղյուսակ 4.1, 5.

9. ՄԹՆՈՒՈՐՏԻ ԱՄԵՆԱՄԵԾ ԱՂՏՈՏՈՒՄՆԵՐ ԱՌԱՋԱՑՆՈՂ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ՑՈՒՑԱԿԸ

Աղյուսակ 4.1

Նյութի անվանումը	Առավելագույն գետնամերձ խտությունը մգ/մ ³		Աղբյուրի կարգաթիվը	Ներդրումը %		Արտադրա-մաս, տեղամաս
	առանց ֆոնի	ֆոնով		առանց ֆոնի	ֆոնով	
1	2	3	4	5	6	7
Արտադրական հրապարակ N1						
Փոշի անօրգանական (SiO ₂ –20-70%)	0.155	-	5	97.43	-	Բետոնի պատրաստման հանգույց
Ածխածնի օքսիդ	0.058	-	2	58.97	-	Ասֆալտ բետոնի հանգույց
Ազոտի օքսիդներ	0.020	-	2	60.0	-	-//-
Ածխաջրածիններ	0.050	-	2	95.92	-	-//-
Արտադրական հրապարակ N2						
Փոշի անօրգանական (SiO ₂ –20-70%)	0.0017	-	1	100	-	Անդեզիտա-բազալտի հանք

Աղտոտող նյութերի գետնամերձ խտությունները չեն գերազանցում համապատասխան նյութերի ՍԹԽ:

10. ՍՅԱ ՆՈՐՄԱՏԻՎՆԵՐ ՀԱՍՆԵԼՈՒ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ

ԱՌՅՈՒՄԱԿ 5.

N N ը / կ	Միջոցառման անվանումը և աղտոտման աղբյուրի համարը	Իրականաց- ման ժամկետը	Վնասակար նյութի (նյութեր) արտանետումը մինչև միջոցառումը		Վնասակար նյութի (նյութեր) արտանետումը իրականացնելուց հետո	
			գ/վրկ	տ/տարի	գ/վրկ	տ/տարի

Արտադրական հրապարակ N 1

ՓՈՇԻ ԱՆՕՐԳԱՆԱԿԱՆ (SiO2 –20-70%)

1	1	2015	0,579	5,0	0,579	5,0
2	3	2015	1,100	9,500	1,100	9,500
3	4	2015	1,100	9,500	1,100	9,500
4	5	2015	0.231	2,0	0.231	2,0
	Ընդամենը	2015	3.010	26,0	3.010	26,0

ԱԾՆԱԾՆԻ ՕՔՍԻԴ

1	1	2015	0,978	8,450	0,978	8,450
2	2	2015	0,055	0,470	0,055	0,470
	Ընդամենը	2015	1,033	8,920	1,033	8,920

ԱԶՈՏԻ ՕՔՍԻԴՆԵՐ (երկօքսիդի հաշվարկով)

1	1	2015	0,335	2,890	0,335	2,890
2	2	2015	0,019	0,160	0,019	0,160
	Ընդամենը	2015	0,354	3,050	0,354	3,050

ԱԾՆԱԶՐԱԾԻՆՆԵՐ

1	1	2015	0,174	1,500	0,174	1,500
2	2	2015	0,058	0,500	0,058	0,500
	Ընդամենը	2015	0,232	2,0	0,232	2,0

Արտադրական հրապարակ N 2

ՓՈՇԻ ԱՆՕՐԳԱՆԱԿԱՆ (SiO2 –20-70%)

1	1	2015	1.068	8.0	1.068	8.0
---	---	------	-------	-----	-------	-----

Քանի որ արտանետումները չեն առաջացնում գերնորմատիվային աղտոտվածություն, չի նախատեսվում արտանետումների նվազեցմանն ուղղված միջոցառումներ, աղյուսակ 5-ը լրացվում է համաձայն փաստացի չափաքանակների, որոնք առաջարկվում են որպես ՍԹԱ նորմատիվներ:

11. ԱՆՇԱՐԺ ԱՂՔՅՈՒՐՆԵՐԻՑ ԱՂՏՈՏՈՂ ՆՅՈՒԹԵՐ ՄԹՆՈՒՈՐՏ
ԱՐՏԱՆԵՏԵԼՈՒ «ԴՈՐՈՃՆԻԿ» ՍՊԸ ՆՈՐՄԱՏԻՎՆԵՐ /ԶԱՓԱՔԱՆԱԿՆԵՐ

ԱՂՅՈՒՍԱԿ 6.

Աղտոտող նյութը	Ընդհանուր արտանետումները	
	գ/վրկ	տ/տարի
<i>Արտադրական հրապարակ N 1</i>		
Փոշի անօրգանական (SiO ₂ –20-70%)	3.010	26,0
Ածխածնի օքսիդ	1,033	8,920
Ազոտի օքսիդներ (երկօքսիդի հաշվարկով)	0,354	3,050
Ածխաջրածիններ	0,232	2,0
<i>Արտադրական հրապարակ N 2</i>		
Փոշի անօրգանական (SiO ₂ –20-70%)	1.068	8.0

12 ԱՆԲԱՐԵՆՊԱՍՏ ԿԼԻՄԱՅԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿ
ԱՐՏԱՆԵՏՈՒՄՆԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

Անբարենպաստ եղանակի դեպքում արտանետումների կարգավորման միջոցառումները կրում են կազմակերպչական-տեխնիկական բնույթ և գործնականորեն ընդգրկում են վնասակար նյութերի արտանետումների բոլոր աղբյուրները:

1. Թույլ չտալ սարքավորման գերբեռնված աշխատանք
2. Խստորեն հետևել տեխնոլոգիայի ընթացակարգին
3. Չբեռնավորել և չդատարկել լուծիչներ և հեշտ բոցավառվող բռնկվող նյութեր
4. Սահմանափակել փոշու արտանետումը
5. Վնասակար նյութերի արտանետումների քանակի մեծացման դեպքում հարկ է անմիջապես դանդաղեցնել կամ ժամանակավորապես դադարեցնել տվյալ սարքավորման աշխատանքը:
6. Վնասակար նյութերի՝ փոշու արտանետումները նվազեցնելու համար արտադրական հրապարակը, ավտոճանապարհները պարբերաբար ջրել:

13. ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ, ՈՐՈՆՔ ՆԱԽԱՏԵՍՎՈՒՄ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՒՄ ԵՆ ԱՐՏԱՆԵՏՈՒՄՆԵՐԻ ԿԵՐԱՀՍԿՄԱՆ ԵՎ ՍԹԱ ԿԱՏԱՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ

Քանի որ ՍԹԱ կատարման համար պատասխանատու է ձեռնարկությունը, արտանետումներին հետևում և ստուգում է բնության պահպանության համար պատասխանատու անձը:

Վնասակար նյութերի արտանետումների քանակը որոշվում է այդ վնասակար նյութերի խտությունների և գազերի օդային խառնուրդների ծավալների ուղղակի չափման մեթոդներով: Ուղղակի չափման մեթոդների անհնարինության դեպքում թույլատրվում է տեսական հաշվարկի մեթոդը: Տվյալ դեպքում օգտագործվել է տեսական հաշվարկի մեթոդը:

Անբարենպաստ կլիմայական պայմանների ժամանակ, բնակչության առողջության համար վնասաբեր մթնոլորտի աղտոտման ընթացքում ձեռնարկությունը պարտավոր է վնասակար նյութերի արտանետումները իջեցնել ընդհուպ մինչև աշխատանքի դադարեցումը:

Եթե վթարի արդյունքում ՍԹԱ -ի նորմատիվը գերազանցվում է, ձեռնարկությունը պարտավոր է այդ մասին հայտնել մթնոլորտի պահպանությունը վերահսկող մարմնին և անհապաղ միջոցներ ձեռնարկել վնասակար նյութերի արտանետումները սահմանափակելու ուղղությամբ, ինչպես նաև «ՀՀ ԱՆ ՊՀՀ տեսչություն» տեղեկատվություն հաղորդել վթարի և ձեռնարկված միջոցառումների մասին:

«ԴՈՐՈՄՆԻԿ» ՍՊՈ ՕՊՕ-ի ՀԱՇՎԱՐԿԸ

Սահմանային թույլատրելի արտանետումների նորմատիվները սահմանվում են այն արտանետման աղբյուրների կամ դրանց խմբերի համար, որոնց արտանետումների առավելագույն նախագծային ցուցանիշների հիման վրա հաշվարկված օդի պահանջվող օգտագործումը մեկ տարում գերազանցում է երկու միլիարդ խորանարդ մետր չափանիշը կամ վայրկյանում գերազանցում է երկու հազար խորանարդ մետր չափանիշը:

Այն կազմակերպությունները, որոնք ունեն մթնոլորտային արտանետումների անշարժ աղբյուրներ, և նրանց նախագծային առավելագույն արտանետումները պետք է բավարարեն հետևյալ պայմանը՝

$$\text{ՕՊՕ տարեկան} = \sum \frac{nU_i}{t U_{\text{ՄԿԼ}}} > 2 \text{ մլրդ խոր. մ/տարի, որտեղ՝}$$

- ՕՊՕ տարեկան-ը օդի պահանջվող օգտագործումն է՝ տարեկան կտրվածքով,
- U_i -ն i -րդ նյութի տարեկան առավելագույն արտանետումն է՝ ըստ Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության կողմից հաստատված սահմանային թույլատրելի արտանետումների նորմատիվների նախագծի կամ տեխնոլոգիական ռեգլամենտի՝ մգ/տարի,
- $U_{\text{ՄԿԼ}}$ -ն i -րդ նյութի միջին օրական սահմանային թույլատրելի խտությունն է՝ մգ/խոր. մ:

Ա/Հ-N-1 –ի համար ՕՊՕ-ն հաշվարկվել է՝

- Անօրգանական փոշու համար՝ ՍԹԽ-ի միջին օրեկա 0.1 մգ/մ^3 , իսկ տվյալ նյութի առավելագույն արտանետումը կազմում է 26.0 տ/տարի :
- Ածխածնի օքսիդի համար՝ ՍԹԽ-ի միջին օրեկա 3 մգ/մ^3 , իսկ տվյալ նյութի առավելագույն արտանետումը կազմում է 8.920 տ/տարի :
- Ազոտի օքսիդների (երկօքսիդի հաշվարկով) համար՝ ՍԹԽ-ի միջին օրեկանը 0.04 մգ/մ^3 , իսկ տվյալ նյութի առավելագույն արտանետումը կազմում է 3.050 տ/տարի :
- Ածխաջրածինները ՍԹԽ-ի միջին օրեկա չունեն, հաշվարկում չի ընդգրկվել:

$$\text{ՕՊՕ} = (26.0 \times 10^9) : 0.1 + (8.920 \times 10^9) : 3 + (3.050 \times 10^9) : 0.04 = 339.22 \text{ մլրդ մ}^3/\text{տարի}$$

ՕՊՕ-ն գերազանցում է 2 մլրդ/մ^3 շեմը ($339.22 \text{ մլրդմ}^3/\text{տարի}$), ապա ընկերությունը պետք է մշակի սահմանային թույլատրելի արտանետումների նորմատիվներ՝ արտանետման աղբյուրներ կամ դրանց խմբերի համար:

Ա/Հ-N-2 –ի համար ՕՊՕ-ն հաշվարկվել է՝

- Անօրգանական փոշու համար՝ ՍԹԽ-ի միջին օրեկա 0.1 մգ/մ^3 , իսկ տվյալ նյութի առավելագույն արտանետումը կազմում է 8.0 տ/տարի :

$$\text{ՕՊՕ} = (8.0 \times 10^9) : 0.1 = 80.0 \text{ մլրդ մ}^3/\text{տարի}$$

ՕՊՕ-ն գերազանցում է 2 մլրդ/մ^3 շեմը ($80.0 \text{ մլրդմ}^3/\text{տարի}$), ապա ընկերությունը պետք է մշակի սահմանային թույլատրելի արտանետումների նորմատիվներ՝ արտանետման աղբյուրների կամ դրանց խմբերի համար:

«ԴՈՐՈՇՆԻԿ» ՍՊԸ գործունեությունից արտանետումների հետևանքով շրջակա միջավայրին հասցվելիք վնասի մեծության հաշվարկ

Համաձայն «Մթնոլորտային օդի պահպանության մասին» օրենքի, բնությանը հասցված վնասի հատուցման հաշվարկը կատարվում է համաձայն «Մթնոլորտի վրա տնտեսական գործունեության հետևանքով առաջացած ազդեցության գնահատման կարգի», հաստատված 21.01.2005թ. թիվ N 91-Ն ՀՀ Կառավարության որոշմամբ,
«ԴՈՐՈՇՆԻԿ» ՍՊԸ կողմից հասցված վնասի մեծության հաշվարկը կատարվում է հետևյալ բանաձևով`

Ա/Հ-N-1

1. Փոշի անօրգանական(SiO₂ 20 -70%) համար

$$U_1 = \zeta q \cdot \Phi g \cdot \sum \rho_1 \cdot V_1$$

որտեղ`

ζq - աղտոտող աղբյուրի շրջապատի գործակիցն է` - 4

Φg - փոխանցման գործակիցն է` - 1000 դրամ

V_1 – նյութի համեմատական վնասակարության մեծությունն է` - փոշի անօրգանական -

10

ρ_1 – տվյալ նյութի արտանետումների քանակի հետ կապված գործակիցն է, որը հաշվում են հետևյալ բանաձևով`

$$\rho_1 = q \cdot / 3S_{ա_2} - 2U_{\theta U} /$$

որտեղ`

q - անշարժ աղբյուրների համար – 1

$S_{ա}$ - տվյալ նյութի արտանետման քանակն է` փոշի անօրգանականի համար - **26.0**

տ/տարի

$$\rho_1 = 1 \cdot / 3 \cdot 26.0 - 2 \cdot 0 / = 78,0$$

Համաձայն վերոնշվածի, վնասի մեծությունը ածխածնի օքսիդի համար կկազմի`

$$U_1 = 4 \cdot 1000 \cdot 78,0 \cdot 10 = 3120000 \text{ դրամ}$$

2. Ածխածնի օքսիդի համար`

$$U_2 = \zeta q \cdot \Phi g \cdot \sum \rho_2 \cdot V_2$$

որտեղ`

ζq - աղտոտող աղբյուրի շրջապատի գործակիցն է` - 4

Φg - փոխանցման գործակիցն է` - 1000 դրամ

V_2 – նյութի համեմատական վնասակարության մեծությունն է` - ածխածնի օքսիդ - 1

ρ_2 – տվյալ նյութի արտանետումների քանակի հետ կապված գործակիցն է, որը հաշվում են հետևյալ բանաձևով`

$$\rho_2 = q \cdot / 3S_{ա_2} - 2U_{\theta U} /$$

որտեղ`

q - անշարժ աղբյուրների համար – 1

$S_{ա}$ - տվյալ նյութի արտանետման քանակն է` ածխածնի օքսիդի համար – **8.920տ/տարի**

$$\rho_2 = 1 \cdot / 3 \cdot 8,920 - 2 \cdot 0 / = 24,96$$

Համաձայն վերոնշվածի, վնասի մեծությունը ածխածնի օքսիդի համար կկազմի`

$$U_2 = 4 \cdot 1000 \cdot 24,96 \cdot 1 = 99840 \text{ դրամ}$$

3. Ազոտի օքսիդի համար

$$U_3 = \zeta q \cdot \Phi g \cdot \sum P_3 \cdot U_3$$

որտեղ՝

ζq - աղտոտող աղբյուրի շրջապատի գործակիցն է՝ - 4

Φg - փոխանցման գործակիցն է՝ - 1000 դրամ

U_3 – նյութի համեմատական վնասակարության մեծությունն է՝ - ազոտի օքսիդ - 12,5

P_3 – տվյալ նյութի արտանետումների քանակի հետ կապված գործակիցն է, որը հաշվում են հետևյալ բանաձևով՝

$$P_3 = q \cdot / 3S_{ա_1} - 2U_{թԱ} /$$

որտեղ՝

q - անշարժ աղբյուրների համար – 1

$S_{ա}$ - տվյալ նյութի արտանետման քանակն է՝ ազոտի օքսիդի համար – 3,050տ./տարի

$$P_4 = 1 \cdot / 3 \cdot 3,050 - 2 \cdot 0 / = 9,15$$

Համաձայն վերոնշվածի, ազոտի օքսիդի վնասի հատուցումը կկազմի՝

$$U_3 = 4 \cdot 1000 \cdot 9,15 \cdot 12,5 = 457500 \text{դրամ}$$

4. Ածխաջրածինների համար՝

$$U_4 = \zeta q \cdot \Phi g \cdot \sum P_4 \cdot U_4$$

որտեղ՝

ζq - աղտոտող աղբյուրի շրջապատի գործակիցն է՝ - 4

Φg - փոխանցման գործակիցն է՝ - 1000 դրամ

U_4 – նյութի համեմատական վնասակարության մեծությունն է՝ ածխաջրածիններ- 3

P_4 – տվյալ նյութի արտանետումների քանակի հետ կապված գործակիցն է, որը հաշվում են հետևյալ բանաձևով՝

$$P_4 = q \cdot / 3S_{ա_2} - 2U_{թԱ} /$$

որտեղ՝

q - անշարժ աղբյուրների համար – 1

$S_{ա}$ -տվյալ նյութի արտանետման քանակն է՝ ածխաջրածիններ -2.0տ/տարի

$$P_4 = 1 \cdot / 3 \cdot 2,0 - 2 \cdot 0 / = 6,0$$

Համաձայն վերոնշվածի, վնասի մեծությունը ընդգրկված ժամանակաշրջանում ածխածնի օքսիդի համար կկազմի՝

$$U_4 = 4 \cdot 1000 \cdot 6,0 \cdot 3 = 72000 \text{դրամ}$$

$$U = U_1 + U_2 + U_3 + U_4 = 3120000 + 99840 + 457500 + 72000 = 3749340 \text{ դրամ}$$

Ընդհամենը վնասի մեծությունը կազմում է 3749340դրամ

Ա/Հ-Ն-2

1. Փոշի անօրգանական(SiO₂ 20 -70%) համար

$$Ա1 = \zeta q \cdot \Phi g \cdot \sum \rho_1 \cdot \psi_1$$

որտեղ՝

ζq - աղտոտող աղբյուրի շրջապատի գործակիցն է՝ - 4

Φg - փոխանցման գործակիցն է՝ - 1000 դրամ

